ԵԴ1/2225/01/25
(ՀԿԴ/0203/01/25)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27 օգոստոսի 2025 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահին փոխարինող Արման Կուրեխյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ1/2225/01/25 (ՀԿԴ/0203/01/25) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի օգոստոսի 11-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2025 թվականի հունիսի 27-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Լիլիթ Ռաֆայելի Կոստանյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ 62252625 (ԵԴ1/2225/01/25) քրեական վարույթը:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Ս.Յուզբաշյան) 2025 թվականի հունիսի 30-ին որոշում է

կայացրել թիվ ԵԴ1/2225/01/25 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հուլիսի 31-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԵԴ1/2225/01/25 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին:

3. Հակակոռուպցիոն դատարանը (դատավոր Վ.Ստեփանյան) 2025 թվականի օգոստոսի 11-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0203/01/25 (ԵԴ1/2225/01/25) քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի օգոստոսի 18-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Լիլիթ Կոստանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«(...) նա օժանդակել է ամուսնու՝ պաշտոնապար անձ հանդիսացող* [redacted] *կողմից հանցավոր ճանապարհով՝ 2006-2016 թվականների ընթացքում կատարված հանցագործությունների՝ կաշառքներ ստանալու և կոռուպցիոն բնույթի այլ հանցագործությունների արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով դրամական միջոցներն օրինականացնելուն:*

Այսպես՝

[redacted]

[redacted]

2006-2019 թվականների ընթացքում կաշառքներ ստանալու, պաշտոնեական լիազորությունների չարաշահման, ինչպես նաև կոռուպցիոն բնույթի այլ հանցագործությունների արդյունքում [redacted] ստացել է հանցավոր ծագում ունեցող եկամուտներ՝ գույքի և դրամական միջոցների տեսքով ու տարբեր անձանց, այդ թվում՝ կնոջ՝ Լիլիթ Կոստանյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանյան տարբեր երկրներում բանկային փոխանցումների միջոցով ձեռք է բերել մի շարք անշարժ գույքեր՝ այդ կերպ թաքցնելով հանցավոր ճանապարհով ստացված գումարների մի մասի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները և պատկանելիությունը:

Մասնավորապես՝

Վերը նշված հանցավոր նպատակներով [redacted] անշարժ գույք ձեռք բերելու համար [redacted] կազմակերպմամբ Լիլիթ Կոստանյանը ամուսնու հետ փոխկապակցված անձ՝ [redacted] 2017 թվականի մարտի 1-ին տվել է լիազորագիր, որի հիման վրա վերջինս 2017 թվականի մարտի 3-ին [redacted] բաժնետիրական ընկերության հետ կնքել է [redacted] գնելու վերաբերյալ առուվաճառքի պայմանագրեր, որում Լիլիթ Կոստանյանը հանդես է եկել որպես գնորդ: Այնուհետև, հիշյալ պայմանագրերով ստանձնած պարտավորությունները կատարելու հիմքով Լիլիթ Կոստանյանը 2017 թվականի մարտի 9-ին [redacted] սպասարկվող իր հաշվեհամարից 2 գործարքով [redacted] ընկերության հաշվեհամարին փոխանցել է [redacted] կողմից ստացված հանցավոր ծագում ունեցող եկամուտներից ընդհանուր 133.609.630 ՀՀ դրամին համարժեք 16.175.500 ՌԴ ռուբլի՝ որպես

[redacted] հասցեում գտնվող ոչ բնակելի տարածքների ձեռքբերման վճար:

Նույն հանցավոր նպատակներով արդեն Հունաստանի Հանրապետությունում անշարժ գույքեր ձեռք բերելու համար [redacted] կազմակերպմամբ Լիլիթ Կոստանյանն ամուսնու հետ փոխկապակցված անձ [redacted] 2018 թվականի մարտի 20-ին տվել է լիազորագիր՝ [redacted] տարածքում նրա անունից և նրա փոխարեն կատարելու ցանկացած, այդ թվում՝ անշարժ գույքի առուվաճառքի գործարքներ: Դրանից հետո Լիլիթ Կոստանյանի անվամբ համապատասխան փաստաթղթերի հիման վրա 2018 թվականի ապրիլի 11-ին [redacted] բանկում բացվել է [redacted] հաշվեհամարը: 2018 թվականի ապրիլի 27-ին Լիլիթ Կոստանյանը [redacted] ՓԲԸ-ում սպասարկվող իր հաշվեհամարից [redacted] կողմից ստացված հանցավոր ծագում ունեցող եկամուտներից 145.975.000 ՀՀ դրամին համարժեք 250.000 եվրո, իսկ 2019 թվականի հունիսի 20-ին 80.970.000 ՀՀ դրամին համարժեք 150.000 եվրո գումար է փոխանցել [redacted] բանկում իր անվամբ բացված վերոհիշյալ բանկային հաշվին:

Լիլիթ Կոստանյանի կողմից տրված լիազորագրի հիման վրա [redacted] 2018 թվականի մայիսի 10-ին կնքված առուվաճառքի թիվ [redacted] պայմանագրով 250.000 եվրո գումարով Լիլիթ Կոստանյանի անվամբ ձեռք է բերել [redacted] չորս բնակարաններ:

Բացի այդ, նույն լիազորագրի հիման վրա [redacted] 2019 թվականի հուլիսի 18-ին կնքված թիվ [redacted] պայմանագրի հիման վրա 148.406 եվրո գումարով Լիլիթ Կոստանյանի անվամբ ձեռք է բերել [redacted] բնակարանը [redacted] պահեստը:

[redacted] գտնվող վերը նշված անշարժ գույքերը Լիլիթ Կոստանյանի անվամբ գրանցելով՝ [redacted] դարձել է դրանց

փաստացի սեփականատերը և դեռևս չպարզված անձանց միջոցով ու հանգամանքներում դրանք փվել վարձակալությամբ՝ յուրաքանչյուր գույքի համար ամսական 200-ից 1000 եվրո վարձավճարի դիմաց:

Միևնույն [redacted] *և քաջատեղյակ լինելով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թվականի հունիսի 28-ին ընդունված և նույն թվականի հուլիսի 01-ին ուժի մեջ մտած «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով ՀՀ քրեական օրենսգիրքը 314.3-րդ հոդվածով («Հայտարարագրերում կեղծ տվյալներ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը») լրացնելու մասին, 2018 թվականի սեպտեմբերի 10-ին ձևականորեն ամուսնալուծվել է Լիլիթ Կոստանյանից, ինչը հնարավորություն է ընձեռել* [redacted] *թաքցնել կնոջ կողմից կատարված փոխանցումների, անշարժ գույքեր ձեռք բերելու հանգամանքները, քանի որ Լիլիթ Կոստանյանն ազատվել է որպես հայտարարատու պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձ՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականությունից:*

Այսպիսով, Լիլիթ Կոստանյանը, ամուսնու ներկայացրած անձանց լիազորագրեր տրամադրելով, [redacted] *համար իր անունից անշարժ գույքերի ձեռքբերման պայմանագրեր կնքելու հնարավորություն ընձեռելով, ամուսնուն պատկանող հանցավոր ծագում ունեցող դրամական միջոցներն իր բանկային հաշիվների օգնությամբ շրջանառելով և անշարժ գույքերի գնման նպատակով փոխանցումներ կատարելով, արդյունքում՝ նաև իր անվամբ անշարժ գույքեր գրանցելով միջոցներ տրամադրելու և հնարավոր խոչընդոտները վերացնելու եղանակով օժանդակել է* [redacted] *կողմից մեկ միասնական դիտավորությամբ առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուրը՝ 360.554.630 ՀՀ դրամին համարժեք 400.000 եվրո և 16.175.500 ՌԴ ռուբլի հանցավոր ծագում ունեցող դրամական միջոցներն օրինականացնելուն: (...)»*[1]*:*

---

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 11, թերթեր 2-5:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) [Ու]սումնասիրելով թիվ 62252625 քրեական վարույթի նյութերը, Դատարանն արձանագրում է, որ դեռևս 2025 թվականի հունիսի 05-ին ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի սեփականության դեմ ուղղված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության վարչության պետ Դ.Կոստանդյանը որոշում է կայացրել թիվ 62202608 քրեական վարույթից մեղադրյալ Լիլիթ Կոստանյանի վերաբերյալ քրեական վարույթն անջատելու և անջատված վարույթին 62252625 համարը շնորհելու մասին:*

Թիվ 62202608 քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2019 թվականի սեպտեմբերի 24-ին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 314-րդ հոդվածի 1-ին մասով, 38-314-րդ հոդվածի 1-ին մասով, 38-334-րդ հոդվածի 1-ին մասով և 38-349-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախաձեռնված թիվ 62224819 քրեական վարույթը 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 6-ով նախատեսված կոռուպցիոն բնույթի հանցանքների վերաբերյալ վարույթ է, որը նույն օրը միացվել թիվ 62202608 քրեական վարույթին: Նշված վարույթով, [redacted] *ի թիվս 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով, 314-րդ հոդվածի 1-ին մասով, 38-314-րդ հոդվածի 1-ին մասով, 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով, 38-334-րդ հոդվածի 1-ին մասով և 38-349-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, մեղադրանք է ներկայացվել 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված արարքի կատարման համար (պաշտոնեական դիրքն օգտագործելով առանձնապես խոշոր չափերով հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնել), որի համաձայն նա, 2006-2016 թվականների ընթացքում կատարած հանցագործությունների՝ կաշառքներ ստանալու և պաշտոնեական լիազորությունների չարաշահման դեպքերի արդյունքում ստացված գույքերի իրական բնույթն ու ծագումը թաքցնելու և խեղաթյուրելու նպատակով 2006-2019 թվականների ընթացքում օրինականացրել է առանձնապես խոշոր չափերով հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի*

իմաստով հանդիսանալով հայտարարագիր ներկայացնելու պարտականություններ ունեցող անձ, թաքցրել է հայտարարագրման ենթակա փվյալը, որը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքի չհայտարարագրմանը, իսկ Լիլիթ Ռաֆայելի Կոստանյանին ներկայացված մեղադրանքի բովանդակային ուսումնասիրությունից պարզվել է, որ վերջինիս մեղադրանք է ներկայացվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ պաշտոնատար անձ [redacted] *մեղսագրվող արարքի օժանդակության համար, մասնավորապես՝* [redacted] *Լ.Կոստանյանն ազատվել է որպես հայտարարատու պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձ՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականությունից:*

Նշվածի համատեքստում Դատարանը, հաշվի առնելով՝ թիվ 62202608 քրեական վարույթում միացված վարույթներից թիվ 62224819 քրեական վարույթը կոռուպցիոն բնույթի է, նկատի ունենալով, որ թիվ 62202608 քրեական վարույթից մաս անջատված թիվ 62252625 քրեական վարույթով մեղադրյալ Լիլիթ Կոստանյանին մեղադրանք է առաջադրվել ամուսնուն՝ պաշտոնատար անձ հանդիսացող [redacted] *կողմից հանցավոր ճանապարհով՝ 2006-2016 թվականի ընթացքում կատարված հանցագործությունների՝ կաշառքներ ստանալու և կոռուպցիոն բնույթի այլ հանցագործությունների արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով դրամական միջոցներն օրինականացնելուն օժանդակելու համար, Դատարանը գտնում է, որ թիվ 62252625 քրեական վարույթը ենթակա է քննության ՀՀ հակակոռուպցիոն դատարանի կողմից: (...)»*[2]:

7. Հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Վերոշարադրյալի համատեքստում Դատարանը հանգում է հետևության առ այն, որ բոլոր այն դեպքերում, երբ անմիջականորեն փողերի լվացմանն ուղղված՝ հանցակազմը սահմանող հոդվածով նկարագրված վերոշարադրյալ գործողությունները չեն կատարվել ծառայողական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ սահմանված կարգով կարգադրիչ լիազորությունները կամ ծառայողական լիազորությունները կամ ծառայողական դիրքից բխող հեղինակությունն օգտագործելու եղանակով, 2003 թվականի ապրիլի*

---

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 12, թերթեր 41-47:

18-ի ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով և 2021 թվականի մայիսի 05-ի ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով քննվող վարույթը ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա չէ՝ նույնիսկ այն դեպքերում, երբ հանցավոր ճանապարհով ստացված գույքը գոյացել է ՀՀ քրեական օրենսգրքի կոռուպցիոն հոդվածները սահմանող ցանկում ներառված որևէ կոռուպցիոն բնույթի հանցանքի կատարման արդյունքում: Այսինքն՝ եթե պաշտոնատար որևէ անձի՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարված հանցանքի արդյունքում ստացվել է գույք, սակայն դրա փոխարկմանը (կոնվերտացմանը), փոխանցմանը, գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, տեղաբաշխումը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելուն կամ խեղաթյուրելուն, գույք ձեռք բերելուն, տիրապետելուն, պահելուն, օգտագործմանը կամ տնօրինմանն ուղղված գործողությունները չեն կատարվել պաշտոնից բխող իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, տվյալ գործով վարույթը ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա չէ:

(...)

Դատարանն արձանագրում է, որ Լիլիթ Կոստանյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (...) այն բանի համար, որ նա ենթադրաբար օժանդակել է ամուսնու՝ պաշտոնատար անձ հանդիսացող [redacted] կողմից ենթադրաբար հանցավոր ճանապարհով 2006-2016 թվականների ընթացքում կատարված հանցագործությունների՝ կաշառքներ ստանալու և կոռուպցիոն բնույթի այլ հանցագործությունների արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով դրամական միջոցներն օրինականացնելուն:

Մեղադրյալ Լիլիթ Կոստանյանին վերագրվող ենթադրյալ հանցանքով վարույթը ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու համար անհրաժեշտ է, որ [redacted] անմիջականորեն փողերի լվացմանն ուղղված գործողությունները կամ մեղադրյալ Լ.Կոստանյանի՝ [redacted] անմիջականորեն փողերի լվացմանն օժանդակելուն ուղղված գործողությունները

կատարվեն իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Դատարանն արձանագրում է, որ ինչպես սույն քրեական գործով մեղադրյալ Լիլիթ Կոստանյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին 2025 թվականի հունիսի 04-ի , այնպես էլ [redacted] *որպես թիվ 62202608 քրեական վարույթով մեղադրյալ ներգրավելու մասին 2021 թվականի հուլիսի 26-ի որոշմամբ առկա չէ ձևակերպում առ այն, որ անմիջականորեն փողերի լվացմանն ուղղված ենթադրյալ հանցավոր գործողությունները (...) կատարվել են իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով: Այս առումով Դատարանը հարկ է համարում վերստին արձանագրել, որ փողերի լրացման հանցակազմը կոռուպցիոն բնույթ է կրում և ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին բացառապես այն դեպքերում, որ մեղադրյալի՝ անմիջականորեն փողերի լվացմանն ուղղված գործողությունները (...) կատարվել են պաշտոնից բխող իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, ինչի մասին պետք է ուղղակիորեն նշված լինի հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման փաստական հիմքում:*

Վերոշարադրյալի համատեքստում Դատարանը փաստում է, որ թեև հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման փաստական հիմքից ենթադրվում է, որ մեղադրյալ Լիլիթ Կոստանյանին վերագրվող փողերի լվացման ենթադրյալ հանցանքին նախորդող ենթադրյալ հանցանքները կատարվել են [redacted] *կողմից և առերևույթ կրել են կոռուպցիոն բնույթ, սակայն ինչպես սույն քրեական գործով մեղադրյալ Լիլիթ Կոստանյանի, այնպես էլ* [redacted] *նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումներում առկա չէ նշում՝ փողերի լվացմանը (դրան օժանդակելուն) ուղղված գործողություններն իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարված լինելու մասին, ինչպիսի պարագայում հիմնավոր չէ սույն քրեական գործը ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու մասին հետևությունը:*

Դատարանը հատկանշական է համարում, որ նույն դիրքորոշումը կիսել է ինչպես նախաքննական մարմինը, այնպես էլ հանրային մեղադրանքի կողմը (ՀՀ գլխավոր դատախազը 2025 թվականի հունիսի 05-ի որոշմամբ արձանագրել է, որ թեև Լիլիթ Կոստանյանին վերագրվող ենթադրյալ հանցանքով վարույթը կոռուպցիոն բնույթի չէ, սակայն ընդդատության կանոնների փոփոխությամբ նախաքննությունը հանձնարարվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին): (...)

Անդրադառնալով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նկատառմանն առ այն, որ Լիլիթ Կոստանյանին վերագրվող ենթադրյալ հանցանքի դրվագով թիվ 62252625 քրեական վարույթն անջատվել է թիվ 62202608 քրեական վարույթից, որին միացված թիվ 62224819 քրեական վարույթը կոռուպցիոն բնույթի է՝ Դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածով սահմանված կարգով վարույթների առարկայական ընդդատությունը որոշելու համատեքստում որևէ նշանակություն չունի: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, սահմանելով քրեական վարույթները միացնելու և անջատելու հիմքերն ու կարգը, դրանք չի տարանջատում որպես «հիմնական» և «ածանցյալ» վարույթներ, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածով սահմանված կարգով ՀՀ հակակոռուպցիոն դատարանին կարող են ընդդատյա լինել բացառապես ՀՀ քրեական օրենսգրքի հավելված 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթը (այնպիսի վարույթը, որով քննության առարկա է հանդիսանում կոռուպցիոն հանցանք): Այլ կերպ՝ անջատված վարույթով քննության առարկա է հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված կոնկրետ արարք, և տվյալ արարքը սահմանող հանցանքով վարույթի ընդդատությունը ենթակա է որոշման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ քննչական ենթակայությունը (հոդված 181) և դատական վարույթների առարկայական ենթակայությունը (հոդված 260) կանոնակարգող նորմերի պահպանմամբ: Դատարանի գնահատմամբ, հակառակ մեկնաբանությունը հնարավորություն կտա արհեստականորեն շրջանցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ընդդատության իմպերատիվ կարգավորումները, ինչը վերջնարդյունքում կարող է հանգեցնել անձի դատական

պաշտպանության՝ ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքի (իր գործն այն դատարանում քննվելու իրավունք, որի ընդդատությանը այն վերապահված է օրենքով) խաթարմանը:

(...) Դատարանը, հաշվի առնելով քրեական գործով քննության առարկա հանդիսացող ենթադրյալ հանցանքի բնույթը և մինչդատական վարույթում մեղադրյալին մեղսագրված արարքի քրեաիրավական որակումը, այն է՝ Լիլիթ Կոստանյանին ներկայացված մեղադրանքի համաձայն՝ նա ենթադրաբար չի օժանդակել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով ենթադրյալ փողերի լվացման օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների կատարմանը, գտնում է, որ թիվ ՀԿԴ/0203/01/25 (ԵԴ1/2225/01/25) քրեական գործն ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին՝ հաշվի առնելով, որ այն չի հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ, ուստի անհրաժեշտ է թիվ ՀԿԴ/0203/01/25 քրեական գործն ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին՝ ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար: (...)»[3]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/2225/01/25 (ՀԿԴ/0203/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի*

---

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 12, թերթեր 48-65:

կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. *«(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (...), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (...)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (...)»[6]*:*

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատաքննությունների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(...)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(...)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, արձանագրելով, որ Լ.Կոստանյանի վերաբերյալ թիվ 62252625 քրեական վարույթն անջատվել է կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթից, ինչպես նաև նկատի ունենալով, որ մեղադրյալ Լ.Կոստանյանին մեղադրանք է ներկայացվել ամուսնու՝ պաշտոնատար անձ հանդիսացող [redacted] կողմից հանցավոր ճանապարհով՝ 2006-2016 թվականի ընթացքում կատարված հանցագործությունների՝ կաշառքներ ստանալու և կոռուպցիոն բնույթի այլ հանցագործությունների արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով դրամական միջոցներն օրինականացնելուն օժանդակելու համար, գտել է, որ քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին[7]:

---

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

- Հակակոռուպցիոն դատարանը, փաստելով, որ Լ.Կոստանյանին ներկայացված մեղադրանքի համաձայն՝ նա ենթադրաբար չի օժանդակել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով ենթադրյալ փողերի լվացման օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների կատարմանը, գտել է, որ թիվ ՀԿԴ/0203/01/25 (ԵԴ1/2225/01/25) քրեական վարույթն ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին[8]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ սույն գործի նյութերի, այդ թվում, մեղադրական եզրակացության[9] ուսումնասիրությունից հետևում է, որ Լիլիթ Կոստանյանի վերաբերյալ թիվ 62252625 քրեական վարույթն անջատվել է թիվ 62202608 կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթից, և վերջինին վերագրվում է ամուսնու՝ **պաշտոնատար անձ հանդիսացող** [redacted] կողմից հանցավոր ճանապարհով՝ 2006-2016 թվականների ընթացքում ենթադրաբար կատարված հանցագործությունների՝ կաշառքներ ստանալու և կոռուպցիոն բնույթի այլ հանցագործությունների արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով դրամական միջոցներն օրինականացնելուն ենթադրյալ **օժանդակությունը**: Վերոգրյալից բխում է, որ Լիլիթ Կոստանյանին ներկայացված մեղադրանքն անմիջականորեն կապված է Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա հիշյալ կոռուպցիոն վարույթի հետ:

Հետևաբար, հաշվի առնելով արդարադատության շահը, այդ թվում՝ վարույթի պատշաճ և համակողմանի քննությունն ապահովելու անհրաժեշտությունը՝ գտնում ենք, որ սույն քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

16. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/2225/01/25 (ՀԿԴ/0203/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր չէ:

---

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[9] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 11, թերթեր 127-173:

17. Հետևաբար, գտնում ենք, որ թիվ ԵԴ1/2225/01/25 (ՀԿԴ/0203/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Լիլիթ Ռաֆայելի Կոստանյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ ԵԴ1/2225/01/25 (ՀԿԴ/0203/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐՄԱՆ ԿՈՒՐԵԽՅԱՆ